ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4
«Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 12 դեկեմբերի 2018թ.

ժամը 13:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Բադալյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մարգարյան, Լ. Քոթանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>
(Ս.Բադալյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների գնահատման մասին
3. Մերժված հայտի մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. <u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների գնահատման մասին</u>
(Ս.Բադալյան)

Ընդունել ի գիտություն, որ 11.12.2018թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից <<Հայկարլի>>ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ <<ՍԱՄՆԱՆ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 118000 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

«Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին են ներկայացվել սույն ընթացակարգի հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգի հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

ProTender©
www.protender.am

3. Մերժված հայտի մասին
(Ս.Բադալյան)

Հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետը, եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել <<ՍԱՄՆԱՆ>> ՍՊԸ-ի հայտը և հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման պահանջ ներկայացնել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Հայկարլի>> ՍՊԸ-ին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:
(Ս.Բադալյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել <<Հայկարլի>> ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման օրը «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքում, հասցե՝ ք.Երևան, Տիգրան Մեծի 36ա հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Բադալյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մարգարյան

Լ. Քոթանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան